

ՎԵՐԻՓՈՐՆԱՅՈՒ ՊԱՏՄԱԺԸ

ՄԱՐԿ ՏՎԷՆԻ

Մէկ անգամ, երեսունհինգ տարի սորանից առաջ, ես հետազոտում էի Ստանիսլաւոս գետի հոսանքը, որը հարուստ է առկի աւազով: Ամբողջ օրերով ես թափառում էի բահը, լազանն ու եղջիւրը ձեռիս և լուանում էի աւազը այստեղ, կամ այնտեղ, ամեն րոպէ յոյս ունենալով հասնել ոսկով հարուստ տեղին, բայց երբէք չէի կարողանում դանել:

Այդ մի հրաշալի տեղ էր. զով, ստուերաւոր, երբեմն բուրաւէտ և շատ տարի առաջ մարդարնակ, բայց յետոյ մարդիկ թողել են այդ տեղը և սքանչելի դրախտը դառել էր ամառի. մարդիկ հեռացել են այդտեղից, երբ ոսկու աւազի վերին շերտը սպառուել էր: Սև ահա այն տեղը, որտեղ երբեմն մի փոքրիկ, կենդանի քաղաք էր կանգնած իւր բանկերով, խմբադրուածիւններով, ապահովագրող ընկերութիւններով և իւր քաղաքապետով ու կառավարչով, այժմ տարածուած է միայն ընդարձակ դմրուխտանման դաշտը, որի վերայ չէ մնացել այդտեղ պատսպարուող ոչ մի մարդկային կանքի հետք: Այդ տեղը գտնուում է Տօլլտաուն տանող ճանապարհի վերայ: Ոչ հեռու նորանից փոշոտ ճանապարհի երկարութեամբ երբեմն-երբեմն կարելի էր տեսնել շատ սիրուն, փոքրիկ կօտէդժներ (ամարանոցներ) որոնք այն աստիճան փաթաթուած էին ոլորուն վարդենիներով, որ նոցա պատուհաններն ու դռները բոլորովին ծածկուել էին վարդենու խիտ ու ծաղիկներով բեղմնաւորուած տերևների տակ: Ինորանից կարելի էր եզրակացնել, որ դոքա բոլորը դատարկ տներ էին, որոնց տէրերը շատ տարի առաջ սնանկանալով ու յուսախաբ լինելով, իրանց ընտանիքն առած թողել հեռացել էին այդ տեղից, չկարողանալով իրանց տները ծախել, կամ յանձնել որևէ մէկին: Մի քանի տեղերում էլ կարելի էր հանդիպել փայտաշէն խրճիթների, որոնք չինուած են եղել ոսկու մշակութեան սկզբնական դարաշրջանում: Երբեմն, թէև շատ հազուադէպ, այդ խրճիթները մարդաբնակ էին դառնում և այդ դէպքերում կարելի էր համոզուել, որ այդտեղ ապրողն այն առաջին ոսկու խուզարկութեան ձեռնարկողներից մէկն էր, որը շատ տարիներ առաջ չինել է այդ խրճիթը և ապրում է այժմ այդտեղ միայն այն պատճառով, որ երբեմն

հնարաւորութիւն ունեցել է վերադառնալու տուն, իւր նահանգը արդէն մեծ հարստութիւն ձեռք բերած, բայց այդ չէ արել իւր ժամանակին, որի հետեանքն եղել է այն, որ կորցրել է իւր բոլոր ունեցածը, կարողութիւնը և անյաջողութիւնից ընկճուած ու յուսահատուած, վճռել է կտրել իւր ազգականների ու ընկերների հետ ունեցած բոլոր կապերը և նոցա համար մեռած համարուել: Այն ժամանակներն ամբողջ Կալիֆորնեան լցուած էր այդ տեսակ շատ մարդկանցով, որոնք մէկ-մէկ կենդանի մեռելոյնք էին, խղճալի աղքատներ, վերաւորուած հպարտութեամբ և քառասուն տարեկան հասակում արդէն ծերացած ու ալեղարդ, որոնց ներքին մտախոհութիւնը միայն իրանց վաղաժամ խորտակուած կեանքի մասին էր. այդպիսիները սաստիկ փափագում էին որքան կարելի է շուտ ազատուել կեանքի կուռից ու յաւիտենական հանգիստ գտնել:

Իսկ մի ամալի տեղ էր, ոչ մի ձայն, ծպտուն չէր լսուում կանաչ դաշտերից ու անտառներից. բացի բզեզների թմբեցնող աղաղոցից, մարդու, կամ դադանի հետք չէր երևում. մէկ խօսքով, ոչ մի բան չէր կարող մարդուս ոյժ ու եռանդ տալ և նորա մէջ զարթեցնել այն ուրախ զգացմունքը, թէ ինքն ապրում է: Այնպէս որ, երբ ես վերջապէս մէկ անգամ ճաշից յետոյ նկատեցի մի մարդկային կերպարանք, շատ ուրախացայ և թեթեւութիւն զգացի: Նա քառասունհինգ տարեկան մի մարդ էր, կանգնած այն սիրուն, վարդենիներով ծածկուած տնեւրից մէկի բակում, որ ես արդէն նկարագրեցի: Բայց այդ տունը, որտեղ մարդն երևաց, անտէր տպաւորութիւն չէր թողնում, այլ ընդհակառակը մարդաբնակ շինութեան տեսք ունէր, որի մասին հոգս էին տանում և աշխատում էին պահպանել ու զեղեցկացնել. այդ տան առաջ կար և մի ծաղկանոց, որը լիքն էր երկնեւրանգ հրաշալի ծաղիկներով: Ընչպէս իմ տանս մէջ. — այդպէս է երկրի սովորութիւնը:

Չափազանց ուրախացայ, երբ ընկայ այդտեղ, մի քանի շաբաթներ շարունակ ոսկու հանք որոնողների խրճիթներում ապրելուց յետոյ, որոնց յատակները կեղտոտ էին, անկողինները հոյնապէս, գործածական ամաններն ու զաւաթները փայտից և առհասարակ ոչ մի զարդարանք չկար, բացի պատկերազարդ թերթերից հանուած նկարներից, որ կպցած էին տախտակէ պատերին և ներկայացնում էին պատեհազմական տեսարաններ: Այո, այնտեղ խրճիթներում տաղտկալի ամայութիւն էր տիրում, իսկ այս տունը մի անկիւն էր, որտեղ կարող էին մարդուս յոգնած աչքերը հանգստանալ և բաւականութիւն տալ մարդկային այն բնածին զգացմունքին, երբ տեսնում է թէկուզ արժան ու համեստ գեղարուեստի առարկաներ և այդ ժամանակ միայն կարծես մարդը հասկանում է, որ այդ զգացմունքը քաղցած է եղել և նոր է գտել ուտելու պաշար: Նսեւրէք չէի կարող հաւատալ, որ խայտաբղէտ կտորտանքից

կարուած գորդը, կարող էր այնքան ուրախացնել ու բաւակա-
նութիւն պատճառել. կամ թէ իմ հոգին կարող էր այդքան
արդէն փառաւորուել ու մի՛թարուել պատերի վերայ եղած
պատառներինց ու շրջանակների մէջ դրուած նկարներից,
բազկաթոռների վերայ գցուած ասեղնագործ աշխատութիւնից,
վինձօրեան աթոռներից և այն դարակից, որը զարդարուած
էր ծովային խեցիներով, գրքերով, չինական սափօրներով ու
զանազան մանր-մունր սիրուն առարկաներով: Դոքա տան մէջ
ստեղծուած են կանացի ձեռքերով և չեն նկատոււմ, երբ նոքա
միշտ աչքի առաջ են լինում, բայց այն ժամանակ միայն մարդ
զգում է թէ որևէ բան իրան պակասում է, երբ այդ առարկանե-
րն այլևս չի տեսնում: Երևի իմ հոգով ստացածս բաւականու-
թիւնը փայլում էր դէմքիս վերայ, որովհետև տանտէրս ուրախ
ու գոհ կերպով կարծես պատասխանեց իմ հարցին՝

— Այդ բոլորը նորա շնորհքն է, ասաց նա քնքշութեամբ,
այդ ամէն մէկ առարկան նա է դարսել ու սարքել և այդ ա-
սելով սենեակն աչքի անցկացրեց սիրով լի հայացքով: Պատ-
կերներէրց մէկի վերայ եղած ճապոնական կտորի ծալքերը
քանդուել էին. դոքա այն ծալքերն են, որ կանայք այնպիսի
հոգատարութեամբ և քնքոյշ մատներով չինում են ու յարմա-
րացնում որևէ առարկայ զարդարելու համար: Ահա տանտէրս
մօտեցաւ այդ քանդուած կտորին ու սկսեց զգուշութեամբ
ուղղել. մի քանի անգամ յետ-յետ գնալով, որ տեսնի թէ ար-
դեօք յաջողութեց առաջուայ նման սիրուն դուրս բերել և յե-
տոյ, որպէս զի բոլորովին վերջացած համարուի այդ գործը,
նա էլի երկու անգամ մօտեցաւ այդ ծալքերին և ձեռքի թե-
թե շարժումով ուղղեց ասելով՝

Նա միշտ այսպէս էր անում: Երբեմն իսկապէս չես կա-
րող ասել, թէ ինչն է պակասում այդ ծալքերին, բայց նոցա
ձեռք տալուն պէս, կարծես աւելի գեղեցիկ տեսք են ստանում.
բայց ինչո՞ւ է այդ այդպէս, ես չգիտեմ, ես որոշ օրէնք գտնել
չեմ կարող. գիտէք դա միևնոյն է թէ՛ մօր ձեռքը վերջնակա-
նապէս դիպչում է իւր երկխայի մազերին, երբ արդէն սանդ-
րել, պրծել է նորա գլուխը: Ես այնքան յաճախ տեսել եմ,
թէ Նա ինչպէս էր զանազան կտորներից սիրուն ծալքեր չի-
նում, որ ես էլ կարող եմ իսկ այնպէս անել, բայց օրէնքները
չգիտեմ. իսկ Նա գիտէ. Նա գիտէ ինչպէս և ինչո՞ւ, իսկ ես
չգիտեմ ինչո՞ւ, այլ գիտէ միայն ինչպէս:

Նա ինձ տարաւ ննջարանը, որ ես ձեռքերս լուամ: Այդ-
պիսի ննջարան եմ շատ տարի է, որ չէի տեսել. սպիտակ
վերմակ, սպիտակ բարձի երեսներ, գորգով ծածկուած յատակ,
պատերին պաստառ ու պատկերներ, մի սեղան, հայելին, քո-
րոցներ զարնելու փոքրիկ բարձն ու սիրուն արդ ու զարդի
մանր առարկաները վրէն դրուած. մի անկիւնում կար լուա-
ցարանի սեղանը լազանով, ջրի ու սապոնի ամաններով, որ
իսկական յախճապակից էին, իսկ լուացարանի սեղանին կից

դարակի վերայ դրուած էին մօտ տասներկու հատ մաքուր, ձիւնի նման սպիտակ երեսաբիւնքեր։ Իսկապէս ես այնքան վայրենացել էի, որ նոյն իսկ ափսոսում էի նոցանով սրբուելու երեսը դարձնալ արտայայտում էր հրճուանք և տանտէրս կրկին պատասխանեց գոհութեան զգացմունքով՝

«Բոլորը նորա շնորհքն է. այս ամենը նա է դասաւորել ու իւր ճաշակով յարմարացրել, այո՛, ամեն մէկ պատիկ իրը. այստեղ ոչ մի բան չկայ, որ նորա ձեռքը դիպած չլինի։ Դուք երևի կըմտածէք... բայց ես չպէտք է այսքան շատ խօսեմ։

Սա այդ ժամանակ ձեռքերս էի սրբում և ամեն մէկ առարկային նայում էի մեծ հետաքրքրութեամբ ու սիրով, ինչպէս որ կը նայէ այն մարդը, որը գտնուում է մի նոր տեղ, ուր ինչ որ տեսնում է, նորա թէ աչքին և թէ սրտին անչափ հաճոյք է պատճառում։ Եւ միևնոյն ժամանակ զգում էի, թէ սենեակում կար մի բան ևս, որ ես չէի տեսնում և իմ տանտէրն ուզում էր, որ այդ ինքս գտնեմ անպատճառ։ Սա զիտէի նոյնպէս, որ նա աշխատում էր օգնել ինձ, աչքերով կամացուկ ցոյց տալով նորան ուրախացնելու համար, շատ էի ուզում իմանալ, գուշակել, թէ այդ ինչ էր, բայց ցաւում էի, որ երկար ժամանակ չէի տեսնում նոր առարկայ և թէն ինձ ոչ մի խօսք չէր ասում տանտէրս, բայց վերջապէս զգացի, թէ ես պիտի նայեմ այն բանի վերայ, որն իմ դիմացն է. այո՛, ես այդ զգացի. որովհետև կարծես ինձ վերայ էին թափւում այն անտեսանելի ուրախութեան ալիքները, որոնք դուրս էին գալիս իմ տանտիրոջ սրտի խորքից։ Նա յանկարծ սկսեց ծիծաղել երջանիկ ծիծաղով և ձեռքերը շփելով բացականչեց։

Այո՛, այո՛, դուք, ես գիտէի, որ դուք կը գտնէք. այդ նորա պատկերն է։

Սա մօտեցայ փոքրիկ, ընկուկեայ չրջանակին և տեսայ մի դագերօտիպ պատկեր, որ առաջ չէի նշմարել։ Դա մի մատաղահաս օրիորդի զարմանալի սիրուն, նուրբ դէմք էր, իմ տեսածներիցս ամենագեղեցիկը։ Տանտէրս կարդաց իմ հիացումը երեսիս վերայ և միանգամայն բաղդաւոր էր համարում իրան։

— Նկարուելու ժամանակ նա 19 տարեկան էր, ասաց պատկերը տեղը դնելով և այդ նոյն օրն էլ մինք մոուսնացանք։ Սրբ դուք նորան տեսնէք... Ա՛խ, մնացէք մեզ մօտ, մինչև նա դայ։

— Բայց սրտեղ է նա, երբ կը վերադառնայ։

— Օ՛, հիմայ նա տանը չէ, գնացել է իւր ծնողներին տեսնելու, որոնք 40-50 մղոն այստեղից հեռու են ապրում. այսօր ճիշդ երկու շաբաթ է, որ գնացել է։

— Ս՛րբ էք սպասում նորան.

— Այսօր չորեքշաբթի է, նա կը գայ շաբաթ երեկոյեան իննը ժամին։

— Շատ ափսոսում եմ, բայց այդքան սպասել ես չեմ կարող։

—Գնա՛լ, չէ՛, ինչո՞ւ գնալ, մի՛ գնաք, նա շատ կը ցաւի։ Մա կը ցաւի՛, այդ գեղեցիկ արարածը եթէ որ նա ինքըն այդ խօսքերն ինձ ասէր, դժուար թէ ես ինձ աւելի երջանիկ համարէի։ Սէ յանկարծ, ես զգացի այնպիսի մի խորը, ջերմ փափաղ նորան տեսնելու, այնպիսի մի ուժեղ ցանկութիւն, որ վախեցայ և ասացի ինքս ինձ՝ «Ո՛հ, ես պէտք է անմիջապէս հեռանամ այստեղից իմ սեփական հանգստութեան համար»։

—Գիտէ՛ք, նա սիրում է, որ մեզ մօտ այնպէս հիւրեր դան, որոնք աշխարհք են աեսել և լաւ բաներ կարող են պատմել։ օրինակ, ձեզ նման մարդիկ։ Նա շատ է սիրում այդ, որովհետեւ ինքն էլ գիտէ։ Օ՛հ, նա համարեա ամեն բան գիտէ և կարող է խօսել... ինչպէս թռչնիկը. իսկ թէ ինչպիսի գրքեր է կարդում, դուք զարմացած կը մնաք, երբ տեսնէք։ Մի՛ գնաք, չէ՛ որ շատ չէք սպասելու, իսկ նա կը ցաւի՛։

Սա լսում էի արդ խօսքերը, բայց չէի հասկանում նոցա իմաստը, այնքան որ խորասուզուած էի իմ մտքերի մէջ։ Մա դուրս էր գնացել սենեակից, բայց ես այդ չէի նկատել։ Նա նորից ներս եկաւ կնոջ պատկերը ձեռին և մօտեցնելով իմ երեսին, ասաց՝

—Հիմայ ասացէք իրան, որ կարող էք մնալ, որ տեսնէք ու ծանօթանաք հետը և դուք կը մնաք։

Երկրորդ անգամ հայեացքս որ ընկաւ այդ սիրուն դէմքի վերայ, խախտեց իմ բոլոր մտադրութիւնները և ես որոշեցի մնալ, ոչ մի ուշադրութիւն չդարձնելով հետևանքի մասին։ Այդ երեկոյ մինչև ուշ գիշեր մենք հանգիստ ծխում էինք ու խօսում զանազան առարկաների մասին, բայց գլխաւորապէս Նորայ մասին և ի հարկէ. վաղուց էր, որ ես այդպիսի լաւ ժամանակ չէի անցկացրել։

Հասաւ հինգշաբթին և այդ օրն էլ անցաւ խաղաղ, միայն իրիկնապահին եկաւ մեզ մօտ մի շատ բարձրահասակ, ժամանակից կանուխ սպիտակած մազերով ոսկի որոնող առաջիններից մէկը, որ ապրում էր երեք մղոն այդտեղից հեռու։ Նա շատ ջերմ կերպով ողջունեց մեզ, կարճ ու սովորական խօսքերով և յետոյ ասաց՝

—Ես եկայ իմանալու երիտասարդ տիկնոջ մասին, թէ ե՞րբ արդեօք նա կը գայ և թէ որե՛տ տեղեկութիւն կա՞յ նրանից։

—Ա՛խ, ինչպէս չէ, նամակ կայ. ուզո՞ւմ էք լսել Տօմ, թէ ինչ է դրում։

—Ի հարկէ, ուզում եմ, Հենրի, եթէ այդ ձեզ անհանգիստ չի անի։

Հենրին խնամքով հանեց նամակը իւր ծոցի տետրի միջից և ասաց որ, եթէ մենք հակառակ չենք լինի, նա մի քանի կտորներ բաց կը թողնի, որոնք յատուկ իրան են վերաբերում և ապա սկսեց կարգաւ կնոջ զարմանալի լաւ նամակը, ի սիրով և միևնոյն ժամանակ ներութեամբ. իսկ յետգրու-

Թիւնը լի էր բարեկամական ողջոյններով Տօմին, Զօին ու Զարլիին և միւս բոլոր ծանօթներին ու հարեաններին:

Վերջացնելով նամակը, նա նայեց Տօմին և բացականչեց՝
— Ե՛հ, դուք դարձեալ հին պատմութիւնը սկսեցիք. յետ տարէք ձեր ձեռքերը և ցոյց տուէ՛ք ձեր աչքերը, դուք միշտ լալիս էք, երբ ես կարդում եմ նորա նամակը. ես այդ մասին կը գրեմ նորան:

— Ո՛հ, չէ՛, մի՛ գրէք, Հենրի. դուք լաւ գիտէք, որ ես արդէն ծերանում եմ և քիչ յուզմունքից իսկոյն արտասուք է երևում աչքերիս մէջ, ես կարծում էի թէ, նա արդէն այստեղ կը լինի, բայց դուրս է դալիս, որ միայն նամակ կայ:

— Բայց ինչպէս կարող էիք այդպէս մտածել. ես համոզուած էի, թէ ամենքին էլ յայտնի է, որ նա կը գայ միայն շաբաթ օրը:

— Շաբաթ օրը. ախ, յիրաւի, ես այդ գիտէի. ճամբարիտ, ես գարմանում եմ, թէ վերջին ժամանակներս ինչ է պատահել ինձ, չարունակ մոռանում եմ. 'ի հարկէ, ես այդ գիտէի. միթէ մենք բոլորս չէինք հաւաքուում այստեղ նորան ընդունելու: Դէ, լաւ, այժմ ես պէտք է գնամ, բայց նորից կը գամ, բարեկամս, երբ նա գայ:

Ուրաւթ երեկոյ էլ եկաւ մի ուրիշ ծերացած ոսկէխոյզ, որ ապրում էր մէկուկէս մղոն հեռու և ասաց, թէ իւր ընկերները կամենում են շաբաթ երեկոյեան հաւաքուել մեզ մօտ և ուրախ ժամանակ անցկացնել, եթէ որ Հենրին ընդդէմ չէ, քանի որ նա կարող է ճանապարհից յոգնած լինել:

— Յոգնած, Նա յոգնած, լսում էք այս իմարին. Զօ, դուք գիտէք, որ նա պատրաստ է թէկուզ վեց շաբաթ շարունակ զուարթ մնալ, միայն թէ կարողանայ ձեզանից մէկն ու մէկին բաւականութիւն պատճառել:

Երբ Զօն իմացաւ, որ նամակ կայ *Նորանից*, խնդրեց կարդալ. նամակի մէջ յիշուած ջերմ ողջոյնը ծերունուն այնպէս յուզեց, որ նա շտապեց ասել թէ ինքն այնպիսի մի աւերակ է, որ միշտ այդպէս զգածուում է, երբ տիկինը յիշում է իւր անունը:

— Աստուած իմ, ինչպէս զգալի է մեզ համար *Նորա* բացակայութիւնը, աւելացրեց նա:

Շաբաթ ճաշից յետոյ ես նկատեցի, որ արդէն շատ յաճախ նայում եմ ժամացոյցիս. Հենրին նոյնպէս նկատեց այդ և հարցրեց անհանգստութեամբ՝

— Դուք կարծում էք թէ Նա այսպէս շո՛ւտ կլինի այստեղ:

Եւ կարծես բռնուեցի յանցանքի մէջ և ինձ անյարմար զգացի, բայց ծիծաղեցի ասելով՝ թէ իմ սովորութիւնն է շուտ-շուտ նայել ժամացոյցին, երբ սպասում եմ որևէ բանի: Բայց ըստ երևոյթին այդ բացատրութիւնը նորան չըզոհացրեց և այդ բոլորից նա մեծ յուզմունքի մէջ ընկաւ. Նա ինձ տարաւ չորս անգամ այստեղը, ուր ճանապարհը ծուռում էր. այնտեղից մենք

կարող էինք հեռու տարածութիւնը տեսնել. ահա այդ տեղում նա ամեն անգամ կանգ էր առնում երկար և նայում էր հեռուն, աչքերը ծածկելով արեւից: Մի քանի անգամ նա ասաց՝

Ես շատ, չափազանց անհանգիստ եմ, որ նա չկայ. թէև դիտեմ, որ նա իրիկուայ իննից առաջ չի կտրող դալ, բայց մի տեսակ նախազգացմունք ինձ ասում է, որ մի ինչ որ բան է պատահել. իսկ դուք չէք կարծում, որ կարող է որևէ բան պատահած լինել:

Նա ուղղակի ամաչում էի նորա տղայական վարմունքից և երբ նա նորից կրկնեց իւր ձանձրալի հարցը, ես այլ ևս կորցրի համբերութիւնս և բաւականին չոր կերպով պատասխանեցի նորան այդ բանը շատ դիպաւ ու կարծես վախեցրեց և դժբանից յետոյ նա իրան վիրաւորուած ու ընկճուած էր զգում այնպէս որ ես ինձ շատ էի մեղադրում իմ անբաղաճ վարութեանս համար և երբ երեկոյեան եկաւ երրորդ ոսկեխոյզը Չարլին, ես սաստիկ ուրախացայ: Չարլին նոյնպէս խնդրեց Հենրիին կարդալ *Նորա* նամակը. յետոյ նոքա երկուսով սկսեցին խորհուրդ անել, թէ ինչպէս դիմաւորել *Նորան* ու ինչ պատրաստութիւն տեսնեն. Չարլին իւր ունեցած անկեղծ խօսքերի բոլոր պաշարը սպառում էր, միայն թէ ցրուէր իւր ընկերոջ կասկածներն ու տխուր նախազգացմունքները:

— *Նորան* որևէ փորձանք է հանդիպել, ասում էք, դա դատարկ բան է, Հենրի. *Նորա* հետ ոչինչ չի կարող պատահած լինել, դուր մի մտածէք այդ մասին. նա գրում է իւր նա. մականում, որ բոլորովին առողջ է, այնպէս չէ և որ այստեղ կը լինի ժամը իննին. միթէ կարող էք ասել, որ նա երբ եկցէ իւր խօսքը չէ կատարել. ի հարկէ, դուք այդ չէք կարող ասել. ուրեմն ձեզ զուր մի տանջէք. նա կը գայ անպատճառ և այդ այնքան ճշմարիտ է, որքան և այն, որ դուք գոյութիւն ունիք այժմ: Գնանք հիմայ ծաղիկ ցաղենք, արդէն քիչ ժամանակ է մնում:

Շուտով եկան և Տօմն ու Ջօն և բոլորը միասին սկսեցին տունը զարդարել ծաղիկներով: Ժամը իննին մօտ նոքա ասացին թէ իրանց հետ բերած երաժշտական գործիքների վերայ կը սկսեն նուագել, որովհետև շուտով կը գան և հարևան աղջկաներն իրանց երիտասարդ ընկերներով, որոնք շատ են սիրում առաջուան, հին ձևի պարերը: Երաժշտական գործիքներն էին ջութակ, թմբուկ ևս կիթառ: Նւ այդպէս, երեքն էլ նստեցին իրար կողքի ու նուագեցին մի ինչ որ աղմկալից պար, իրանց մեծ կօչիկներով չափ պահելով:

Ժամը իննին միայն մի քանի րոպէ էր պակաս: Հենրին դրան մօտ կանգնած նայում էր ճանապարհին և նորա ամբողջ արտաքինը մարմնացած տանջանք էր ներկայացնում, որոնցով պաշարուած էր իւր հոգին: Արդէն նա մի քանի անգամ խմել էր իւր կնոջ կենացը և ցանկացել էր բարի վերադարձ, բայց ահա Տօմը կրկին բացականչեց՝

— Բոլորդ էլ եկէք այստեղ. խմենք էլի մէկ անգամ տիկնոջ կենացը և նա այստեղ կը լինի արդէն:

Ջօն մօտեցրեց ամենքիս մատուցարանի վերայ դրուած լիքը բաժակները. ես վերցրի նոցանից մէկը, բայց Ջօն վախեցած, շնջաց:

— Այդ դրէք տեղը և առէք միւսը:

Ես հնազանդուեցի. Հենրիին վերջին բաժակը հասաւ. հագիւ նա կուլ էր տուել խմիչքը, երբ ժամի իննը խփեց: Նա լսեց ժամացոյցի զարկը և նորա դէմքն աւելի ու աւելի դունատուեց. յետոյ նա ասաց.

— Բարեկամներս, վախից ես հիւանդանում եմ, օգնեցէք ինձ, ուզում եմ պառկել:

Նոքա օգնեցին, որ նա բազմոցի վերայ պառկի. Հենրին յարմար տեղաւորուելով, սկսեց ննջել, բայց խփոյն խօսեց, կարծես քնի մէջ՝ ես կարծես լսում եմ ձիու տրոփիւն. նոքա գալիս են:

Մէկ ոսկէխոյզ մօտեցաւ նորա ականջին և ասաց.

— Այդ Զիմսի Պէրիշն էր, որ եկել էր ասելու թէ մի քիչ նոքա կուշանան, բայց արդէն մօտիկ են այստեղից. տիկնոջ ձին կաղացել է ճանապարհին. բայց կէս ժամից այստեղ կը լինի:

— Ո՛հ, ինչ երջանիկ եմ, որ ոչինչ չէ պատահել:

Եւ նա վերջին խօսքերը հագիւ էր արտասանել, երբ քնեց: Այն ժամանակ ընկերները ոչ մի ըրոյթ չկորցնելով, ճարպիկութեամբ հանեցին նորա շորերը և տարան միւս սենեակ, պառկեցրին անկողնի մէջ, որտեղ ես ձեռքերս լուացել էի. Նոքա այնտեղից դուրս գալով, դուռը ծածկեցին և կարծես պատրաստուում էին դնալու, բայց ես ասացի.

— Խնդրում եմ ձեզ, ջէնտլմէններ, մի՛ գնաք. տիկինն ինձ չի ճանաչում. ես այս տանը առաջին անգամն եմ լինում.

Նոքա զարմացած միմեանց նայեցին, յետոյ Ջօնն ասաց.

— Օհ, խղճով, ախ, նա մեռել է տասնինն տարի առաջ:

— Մեռել է:

— Այո, մեռել է, կամ գուցէ աւելի վատ բան է պատահել:

Ամուսնանալուց վեց ամիս յետոյ նա դնացել էր ծնողներին տեսնելու. վերադարձին, չաբաթ երեկոյեան, Հընդիկները այստեղից հինգ մղոն հեռաւորութեամբ յարձակուում են նորա վերայ և այն օրից Նորա մասին էլ ոչինչ չենք լսել:

— Եւ Հենրին այդ պատճառով կորցրել է խելքը:

Այն ժամանակից սա ոչ մի ըրոյթ աւուղջ չէ եղել. բայց աւելի վատանում է տարին մէկ անգամ, այս միջոցները: Այդ պատճառով տիկնոջ մահուան տարեկիցից երեք օր առաջ հաւաքուում ենք այստեղ, որ Հենրիին քաջալերենք ու հարցնենք թէ

որեւէ լուր ունին նորանից: Իսկ շաբաթ երեկոյեան գալիս ենք,
բնակարանը զարդարում ծաղիկներով և պատրաստութիւն ենք
տեսնում պարելու համար: Արդէն տասնեւիննը տարի է, որ
մենք այդ անում ենք ամեն անգամ այս միջոցին: Առաջին
անգամ, տարելիցի շաբաթ երեկոյեան, մենք քսանևեօթ հոգի
էինք հաւաքուած այստեղ, բացի հարևան աղջկներից. իսկ
հիմայ միայն երեքս ենք մնացել, բայց աղջիկ այլևս ոչ մի
հատ չկայ: Մենք այսպիսի ժամանակ սորան տալիս ենք քնա-
րեր փռլի խմիչքի հետ միասին, եթէ ոչ, կատաղի է դառ-
նում: Ամբողջ տարուան ընթացքում սա իրան լաւ է զգում,
երևակայում է թէ, իւր սիրելին հետն է. միայն նորա մահուան
ժամանակից երեք-չորս օր առաջ սկսում է փնտրել նորան,
հանում է կնոջ հին, սիրալիր նամակը և մենք գալիս ենք ու
խնդրում, որ կարդայ մեզ մօտ այդ նամակը:

Բայց Աստուած իմ, որչափ գեղեցիկ էր նա:

Գեորգ. քաղմ. ՅԻՐՈՒՀԻ ԿՈՍՏԱՆԵԱՆ